Ահա այնտեղ կաշառոած Յուդան համբուրւում է փրկչի հետ, մատնիչը գրկել է համաշխարհային զոհին, քահանայապետի ծառաները, ջահերը բռնած, շրջապատել են նրան. մեծ վարդապետի թշոառ աշակերտները հեռոից երկչոտ դէմքերով նայում են: Սիրոյ եւ եղբայրութեան քարոզչին դատի են կանչում: Այդ պատկերի տխուր փշրանքներն էին միայն մնացել:

Ես միւս պատկերներին նայել չկարողացայ. աչքերս լցոեցան արտասուքով:

— Ո՞վ է կատարել այդ բարբարոսութիւնները, — հարցրի իմ մօտ կանգնած աբեղայից, որ ցոյց էր տալիս ինձ նկարները:

— Եւ դուք հարցնո՞ւմ էք, պարոն, — պատասխանեց նա խորին վրդովմունքով, — միթէ՞ չգիտէք, թէ ի՜նչ տառապանքներ են անցել այդ տաճարի գլխով...

Մարդը, որքան էլ անզգայ լինէր, չէ կարող սառնասիրտ մնալ, երբ տեսնում է այսպիսի անգթութիւններ, արհեստի, ճարտարութեան գեղեցիկ արդիւնքը, աստծոյ սրբութիւնները զոհ են գնում կոպիտ վայրենութեան: Թշնամին իր բարբաբոսութիւնները կենդանի մարդկանց վրայ գործ դնելուց յետոյ չէ խնայում եւ անմեղ քարերին... Տխո՜ւր է քո պատկերը, հայրենի աշխարհ, տխո՜ւր... կա՞յ արդեօք քո մէջ մի տեղ, մի փոքրիկ տեղ, որ կրած չլինէր թշնամու դառն հարոածները...

Թախծալի զգացմունքներով մտայ ես տաճարը: Ներսի խոնաւ սառնութիւնը փոքր-ինչ զովացրեց իմ բորբոքոած գլուխը: Այստեղ եւս անիրաւ ձեռքը նոյն բարբարոսութիւններն էր կատարել: Դէպի որ կողմը եւ նայում էի, երեւում էր խորտակում եւ աւերած: Մանոէլ ճարտարապետի հրաշալի գործը աղաւաղոած էր: Լուսամուտների եզերքի գեղեցիկ հիւսոածքը, դռների կամարների սքանչելի դրոագները, սիւների պատուհանների եւ խոյակների հիանալի քանդակները ըստ մեծի մասին ջարդել ու փշրել էին:

Իմ աչքերը որոնում էին Ջալլադին: Ես գտայ նրան մի մռայլ խորանում, ուր խրոած էր մագաղաթների եւ փոշիների մէջ: Այդ ինձ շատ զարմացրեց: Ես այդ լուռ ու մունջ երիտասարդին մինչեւ անգամ գրագէտ չէի համարում, այժմ նա մագաղաթներ էր քրքրում: Ես գտայ նրան ուրախ տրամադրութեան մէջ, նայում էր մի հին Այսմաւուրքի հաստ կազմի վրայ:

Մեր հին գրչագրերի կազմերը առհասարակ շինոած են լինում փայտից եւ պատած մաշկով: Իսկ այդ Այսմաւուրքի կազմի մէջ, փայտի փոխարէն, դրել էին միմեանց կպցրած մագաղաթի թերթեր: Այդ թերթերն էր զգուշութեամբ միմեանցից պոկում Ջալլադը, անդադար կրկնելով. «դուք անհոգ